



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 22 » 06 2020թ.

№ 08/ԼԱ/ - 103

Հունիսի 15-ից 21-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Հունիսի 15-21-ը շրջանների զգալի մասում դիտվել է կարճատև անձրև և ամպրոպ, ամպրոպի ժամանակ՝ քամու ուժգնացում մինչև 25մ/վ արագությամբ, առանձին շրջաններում նաև կարկուտ:

Տեղումների առավելագույն գումարային քանակը գրանցվել է Վանաձորում և Շորժայում՝ 74մմ, Տաշիրում՝ 73մմ, Ճամբարակում՝ 51մմ, մնացած լեռնային շրջաններում մինչև 35մմ քանակությամբ, Օձունում՝ 45մմ, Սիսիանում՝ 21մմ, մնացած շրջաններում մինչև 11մմ քանակությամբ:

Հունիսի 17-19-ին դիտվել է կարկուտ Գյումրիում (10-20մմ), Տաշիրում (18մմ), Շորժայում (10մմ), Սիսիանում (8մմ), Հրազդանում՝ (0,5մմ):

Օդի միջին օրական ջերմաստիճանը ողջ շաբաթվա ընթացքում բարձր է եղել նորմայից 2-5աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է Սյունիքի հովիտներում +32...+37°C, Տավուշում՝ +31...+36°C, Արարատյան դաշտում, Վայոց ձորի և Արագածոտնի նախալեռներում՝ +30...+35°C, Լոռիում և Սյունիքի նախալեռներում՝ +27...+32°C, Շիրակում, Կոտայքում, Գեղարքունիքում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում՝ +23...+28°C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց ձորի և Կոտայքի լեռներում +5...+10°C (Աշոցքում +2°C), Լոռիում՝ +6...+11°C, Տավուշում, Սյունիքի նախալեռներում՝ +9...+14°C, Արարատյան դաշտում, Վայոց ձորի և Արագածոտնի նախալեռներում՝ +12...+17°C, Սյունիքի հովիտներում՝ 15...+20°C:

Ձյան ծածկը բացակայում է:

Շաբաթվա առաջին կեսին հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել, իսկ երկրորդ կեսին՝ գետերում դիտվել է փոփոխական ուժիմ:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 2սմ-ով և կազմել 1900.84 մ (21.06.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա համեմատությամբ բարձր է 2սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ.Ազիզյան

Կադրորդ Գ. Սուրենյան
012 31 79 29